ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

13 հոկտեմբերի 2023 թվական

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԵՐԴՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ
(ՀԱՏՈՒԿ ՆԻՍՏ)

Համաձայն «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի՝ 2023 թվականի հոկտեմբերի 13-ին գումարված Երևանի ավագանու հանդիսավոր նիստում տեղի ունեցավ Երևանի նորընտիր քաղաքապետ Տիգրան Ավինյանի երդմնակալության արարողությունը:

Նիստը վարում էր Երևանի ավագանու ավագ անդամ Մարատ Թոխյանը:

Հանդիսավոր նիստին մասնակցում էին ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանը, ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը, ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը, Բարձրագույն դատական խորհրդի նախագահ Կարեն Անդրեասյանը, բարձրաստիճան պաշտոնյաներ, հասարակական, քաղաքական և մշակութային գործիչներ:

Երևանի նորընտիր քաղաքապետ Տիգրան Ավինյանը երդվեց.

-«Երևանի քաղաքապետի լիազորություններն իրականացնելու ընթացքում պահպանել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, օրենքները, Երևանի ավագանու որոշումները, ազնվորեն և բարեխղճորեն կատարել Երևանի քաղաքապետի լիազորությունները, ծառայել Երևանի բարգավաճմանը, գործել ի բարօրություն նրա բնակիչների:

Պարտավորվում եմ հոգ տանել մեր հնագույն մայրաքաղաքի փառքի պահպանման և բազմապատկման համար, պաշտպանել համայնքի իրավունքները, օրինական շահերը և սեփականությունը, ուժերիս անմնացորդ նվիրումով սատարել ժողովրդի հավատին, նպաստել նրա նյութական և հոգևոր վերելքին:

Աջակից լինել ամեն մի ազնիվ նախաձեռնության, որ միտված կլինի իմ համաքաղաքացիների նվիրական գաղափարների իրականացմանը»:

Համաձայն Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N1-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 113-րդ կետի՝ Երևանի քաղաքապետի երդման ստորագրված տեքստն ի պահ հանձնվեց Երևան քաղաքի պատմության թանգարան:

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը շնորհավորեց Երևանի նորընտիր քաղաքապետ Տիգրան Ավինյանին և Երևանի ավագանու անդամներին:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը նիստը հայտարարեց փակված:

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ **ՄԱՐԱՏ ԹՈԽՅԱՆ**